# ՓՈԽԱԴՐՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Վոթերմաստեր կլասիկ III տիպի էքսկավատորի տեղափոխման

| h/h | Ծախսային հոդվածը | Չափի միավորը | Քանակը | Հեռավորությունը (կմ) | Միավորի գինը (հատ/կմ, դրամ) | Ընդամենը (հազար դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ավտոմեքենա 12 մ կցորդով (Երեւան-Փոթի-Սեւան-Երեւան) | հատ | 1 | 1300 | 1800.0 | 2340.0 |
| 2 | Ավտոմեքենա բեռնատար 13 տ բեռնատարողությամբ (Երեւան-Փոթի-Սեւան-Երեւան) | հատ | 2 | 1300 | 1700.0 | 4420.0 |
| 3 | Ավտոմեքենա բեռնատար 8 տ բեռնատարողությամբ (Երեւան-Փոթի-Սեւան-Երեւան) | հատ | 1 | 1300 | 1700.0 | 2210.0 |
| 4 | Ուղեկցող եւ տեխսպասարկող ավտոմեքենա (Երեւան-Փոթի-Սեւան-Երեւան) | հատ | 1 | 1300 | 150.0 | 195.0 |
| 5 | Գործուղման ծախսեր | մարդ/օր | 48 | | 25000.0 | 1200.0 |
| 6 | Դիզելային վառելիք | լիտր | 2200.0 | - | 320 | 704.0 |
| 7 | Բենզին | լիտր | 150.0 | - | 370 | 55.5 |
| 8 | Այլ ծախսեր (5%) | դրամ | - | - | - | 556.2 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 11680.7 |

«Նաիրիի Բերրիություն» ՍՊԸ-ի տնօրեն _____ Հ.Մեսրոպյան

Գլխավոր հաշվապահ _____ Ք.Հակոբյան

Հայաստանի Հանրապետության
բնապահպանության նախարար
պրն Ա. Հարությունյանին

Հարգելի նախարար

Ձեր 02.07.2010թ-ի № 1/11.1/10852-10 գրությամբ (այսուհետ՝ Գրություն) ՀՀ ֆինանսների նախարարության քննարկմանը ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի № 1522-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Նախագծով առաջարկվում է Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների համար «Վոթերմաստեր կլասիկ III» տիպի ֆիննական արտադրության բազմաֆունկցիոնալ էքսկավատոր ձեռքբերելու նպատակով ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի կենտրոն» ՊՈԱԿ-ին ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացնել 287,468.7 հազար դրամ, որից՝ 257,468.7 հազար դրամը ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայություններ» ծրագրով նախատեսված գումարների միջոցներ միջոցներ միջոցներ

2. Բացի այդ, նկատի ունենալով, որ ձեռքբերվող էքսկավատորը նախատեսվում է Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների համար և այն օգտագործվելու ու մաքրման աշխատանքները կատարվելու է «Բնապահպանական ծրագրերի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, ուստի մեր կարծիքով Նախագծով նախատեսվող ձեռքբերումը համապատասխանում է ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայություններ» ծրագրի բովանդակությանը և նպատակին: Հետևաբար առաջարկում ենք Նախագծով.

ա) ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայություններ» ծրագրում **257,468.7** հազար դրամի չափով կատարել բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների վերաբաշխում՝ այն նախատեսելով «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով,

բ) իսկ լրացուցիչ **30,000.0** հազար դրամի հատկացումն իրականացնել միջծրագրային վերաբաշխմամբ՝ ավելացնելով «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայություններ» ծրագրի գումարը բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով: Միաժամանակ գտնում ենք նպատակահարմար էքսկավատորի ձեռքբերման համար անհրաժեշտ լրացուցիչ գումարների հատկացումն իրականացնել ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով ՀՀ բնապահպանության նախարարությանը նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակներում:

Վերը նշված առաջարկություններին համապատասխան Նախագիծն անհրաժեշտ է լրամշակել, միաժամանակ լրացում կատարելով նաև «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի № 1 հավելվածի № 16 աղյուսակում, իսկ Նախագծում նախատեսել կետ «Բնապահպանական ծրագրերի կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ դրամաշնորհի տրամադրման համապատասխան պայմանագրի կնքման վերաբերյալ՝ նշելով դրամաշնորհի տրամադրման նպատակը:

Ինչ վերաբերում է Նախագծի ընդունման ***նպատակահարմարությանը***, ապա հայտնում ենք.

Գրությանը կից ներկայացված ՀՀ վարչապետին ուղղված գրության համաձայն ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայություններ» ծրագրով նախատեսված 257,468.7 հազար դրամը բավարարում է միայն էքսկավատորի և լրակազմի որոշ սարքավորումների գնման համար, ուստի անհրաժեշտություն է առաջացել ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից լրացուցիչ հատկացնել ևս 30,000.0 հազար դրամ՝ էքսկավատորի ամբողջական լրակազմի ձեռքբերման և տեղափոխման ծախսերի ֆինանսավորման համար (ընդամենը՝ 287,468.7 հազար դրամ):

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ Գրությանը կից ներկայացված արտադրող կազմակերպության գնառաջարկի համաձայն բազմաֆունկցիոնալ էքսկավատորի գինը (CIP մինչև վրացական Փոթի նավահանգիստ) 602,888.0 եվրո է, որը 06.07.2010 թ-ի դրությամբ 1 եվրոյի 464.65 դրամ հաշվարկային փոխարժեքի դեպքում կազմում է 280,131.9 հազար դրամ: Սակայն ներկայացված չէ լրացուցիչ գումարների համապատասխան հաշվարկ-հիմնավորումները:

Հաշվի առնելով վերը նշվածները՝ Նախագծի վերաբերյալ վերջնական դիրքորոշում հնարավոր է հայտնել Նախագծի լրամշակված տարբերակի և լրացուցիչ գումարների համապատասխան հաշվարկ-հիմնավորումների առկայության պայմաններում:

Հարգանքով՝

Տ. Դավթյան

Կապիտալ ծախսերի ֆինանսական
ծրագրավորման բաժին
հեռ. 595-225

08.07.10